



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

N 825-Ն

23.08.2016թ.

**ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԿԱՅԱԳՐԻ ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 1281-Ն ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի
N 927-Ն ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.3-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի» տիպային ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 6-ի «Ներառական կրթություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» N 1281-Ն և 2009 թվականի նոյեմբերի 11-ի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի վկայագրի տիպային ձևը հաստատելու մասին» N 927-Ն հրամանները:
3. Նախարարության իրավաբանական և հանրակրթության վարչությունների պետերին՝ սահմանված կարգով հրամանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի օգոստոսի 23-ի
N 825-Ն հրամանի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր N

ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տրվում է

(անուն, հայրանուն, ազգանուն)

Ծննդյան թիվ _____

առ այն, որ նա ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝

պայմանավորված _____ ֆունկցիայի

(ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ (մտավոր), շարժողական)

_____ Խանգարումով:

(թեթև, միջին, ծանր, խորը)

Հիմք _____

Տարածքային կառավարման պետական
մարմնի ղեկավար/Երևանի քաղաքապետ

ստորագրություն

անուն, ազգանուն